



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ. ԱԶԳԱՅԻՆ. ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԿԻՐ
ԶԱՐԲԱՅԻ ՔԱՀԱՆԱՅ ԿԵՋԻՒԲԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՃԱՐԱԹ, 17 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 49

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երուսաղէմը

ՃԱՐԱՌԻ ՅՈՒՇԵՐԵՐԷՍ.—Թիֆլիզ ու վանքի Աւագ

Եկեղեցին իբր դամբարան

ՌՈՒՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.—Լեւոն աղբիւրը

ԹԵԼԱԿՐԻՉ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ.—Նամակներու ծրարը ԳՐԻԳՈՐԻՍ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆԲԸ.—Ընտրութիւն Ամենայն Հայոց Հայ-

րապետ Տ. Տ. ԳԼՈՐԴ Ե. Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՈՒՐԵՆԵԱՆՑ.—

Ս. Պատրիարք Հօր ուխտը.—Իր տպաւորիչ խօսքերը. — Ս.

Պատրիարքն ի Կոյս. Պալատ.—Մանր լուբեր

ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

ԲԱԲԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԱԲՈԼԼՈՆ ՄԱՅՔՈՑ

«ՏԱՃԱՐ»Ի ԹԷ՛ վարչական և թԷ՛ խմբագրական գործերուն համար պէտք է
դիմել առ Զարմայր Բանահայ Կեօղիւրեան, Կ. Պոլիս, Պեօիկթաօ, Հայոց Եկեղեցի

بشيكطاش ارمنى كليسا سنده «داجار» غزته مى مديرى باباس زارماير افندى

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
«ՏԱՃԱՐ» Ի ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆԻՆ

Տաճար իր երկրորդ չրջանին վերջին ամիսը թեւակոխելու առթիւ, լի վրա թեւամբ՝ իր ձեռնարկած գործին սգաակարութեան և տեւականութեան վրայ, կը բանալայ՝ այժմեան իր երրորդ շրջանի բաժանորդագրութիւնը:

Այս առթիւ կը փութանք յայտնել թէ ժողովուրդին մէջ Բրիտանացական կրօնքի և Հայ Եկեղեցիի սէրը արծարծելու աղնիւ նպատակին աւելի՛ ուժգնութեամբ ու եռանդով ծառայել պիտի աշխատի Տաճար յառաջիկայ երրորդ չրջանին, որու միջոցին որոշ ուղղութեամբ մը պիտի ունենայ միշտ:

Ա. Հոգեւոր կեանքի բաժինը:

Բ. Հայ վիպաբանութեան բաժինը:

Գ. Կրօնի յաւիտեական ճշմարտութիւնները ժողովրդական լեզուով մը հաստատող համոզիչ գրութիւններ՝ ինքնագիր կամ երգչական նշանաւոր հեղինակներէ թարգմանաբար:

Դ. Նախնեաց մատենագրութեան ընտելագոյններուն ժողովրդականացումը, ձեռնհաս և հմուտ գրիչներու կողմէ աշխարհաբար թարգմանուելով:

Ե. Թերադրիչ պատմութիւններ, որոնք մերթ ընդ մերթ պիտի երևան այս սիւնակներուն մէջ, իբրեւ գործնական օրինակ մը աղնիւ զգացումներու, և թելադրող մը բարձր մտածումներու:

Զ. Ս. Գրական ուսումնասիրութիւններ:

Միւս կողմէ, արդարացիօրէն համար թերթին գրական հանդամանքը, խմբագրութիւնս դիմում ըրած է ազգին մէջ ամէնէն աւելի սիրուած գրողներու, իրենց հիւթեղ ուսումնասիրութիւններով զարդարելու Տաճարի սիւնակները:

Ազգային բաժինին մէջ ամէն շաբթու պիտի ամփոփուին շաբթուան կարեւորագոյն լուրերը, գոհացում ապրու համար առաւելագէտ գաւառի և արտասահմանի մեր այն հեռաւոր բաժանորդներուն, որոնք Տաճարէն սերիշ թերթ չեն ստանար:

«ՏԱՃԱՐ» Ի ԹՈՒՐԲԵՐԷՆ ԲԱԺԻՆԸ

Տաճար իր երկամեայ գոյութեան չրջանին մէջ, տարածուելով գլխաւորաբար հայախօս գաւառներու մէջ, մասամբ միայն կրցաւ կատարել իր պարտականութիւնը: Բայց Փոքր Ասիոյ արեւմտեան կողմը շատ քաղաքներու մէջ Հայութիւնը դժբախտաբար կորսնցուցած է իր մայրենի լեզուն, և չունի թերթ մը ուր խօսուի իրեն Հայո՛ւ կրօնքին վրայ, Հայ առաքելական Եկեղեցւոյ ոգիով:

Անցեալ տարիէն զանազան կողմերէ խնդրանքներ եղած էին խմբագրութեանս, գոհացում տալու այս պէտքին ալ, բայց համարձակութիւնը պակսեցաւ մեզի, գործին նիւթական դժուարութիւնը աչքի առջև ունենալով:

Նոյն դժուարութիւնները կան այնօր ալ, քանի որ Տաճար, իր ներկայ վիճակով, հազիւ թէ կարող կ'ըլլայ իր գոյութիւնը պահել: Բայց պէտքին առկողականութիւնը և բարեկամական յորդորներ ու քաջաբերանքներ՝ կը մղեն զմեզ փորձ մը ընելու:

Հետեւապէս երրորդ չրջանի առաջին թիւէն սկս կ'առաջագոյն ընենք — թերթիս 16 էջ հայերէնի մասը անփոփոխ պահելով — յաւելուածական ուր եղեր տալ հայտատու թուրքերէն լեզուով և հոգեհա՛ բովանդակութեամբ:

Ասիկա պիտի շարունակուի անխափան երեք ամիս. և եթէ երբեք ժողովրդային քաջակերութիւնը գայ աջակցել մեր ջանքերուն, պիտի շարունակուի ընդմիշտ:

Հետեւապէս Տաճար յառաջիկայ երրորդ չրջանին փոխանակ տալու իր ներսի, պիտի հրատարակուի ֆանդընի երես, ՆՈՅՆ ՄՆԱԼՈՎ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ՝ այն է՝ Պոլսոյ և գաւառաց համար 40 դր., և արտասահմանի համար 10 ֆր., կամ 2 սոյար, կամ 4 րուբլի:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆՈՒԿԱՆ. ԱԶԳԱՅԻՆ. ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 17 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 49

ԵՐՈՒՍԱՂԵՄԸ

Երեք հոգեւոր ու կարեւոր Հաստատութիւններ, որոնք բացի հոգեւոր ընկալէ, ունին նաեւ մաս քաղաքային, կապուած ըլլալով ժողովրդին ու ժողովրդականութեան, որով ժողովուրդը բացարձակ իրաւունք ունի անոնց հանդէպ խօսելու, վիճելու, իր կարծիքն ու կամքը յայտնելու, անոնցմով ուրախ ըլլալու, պարծենալու ու՝ ցաւալիօրէն՝ շատ անգամներ ալ ցաւելու, զգածուելու, երբ անոնք թափուր են երբեմն գահակալներով, և երբեմն ալ իրենց բարձրութեան ու բուն պարտաւորութեան վրայ չեն գտնուիր: Ուրախ ենք, երբ մին ունեցաւ իր աթոռապետը, ու ահա երկրորդն ալ ունենալու վրայ է: (*)

Մենք կատարուածին վրայ կարծիքներ ու կանխակալ որոշումներ չենք ուզեր ընել: Ժողովուրդին իր պարտուց մէջ չթերանայը. ժողովականներուն ևս համերաշխ, համաձայն գործակցութիւնը և միշտ բարեացակամ արամաւորութիւնները և ազգանուէր խանդոտ ջանքերը այս աթոռապետները կը բարձրացնեն, ու կնճռաւ խնդիրներու լու-

ծումն ալ կը դիւրացնեն. այս կը մաղթենք ու կը սպասենք:

Եւ ահա կը մնայ Երուսաղէմը, կարծես Փրկչին վշտի խորունկ կակծանքը՝ հանդէպ Երուսաղէմին, թէ Երուսաղէմ, Երուսաղէմ, քանի՜ անգամ ուզեցի քեզ ազատել այն վերահաս անկումներէն որուն կը քայլես անգիտակ ու այնչափ արագ, բայց զո՛ւն..

Ու ահա այդ կակիծը նոյն վշտի խորունկութիւնով գէթ մեր վանքին վրայ կ'արձագանգէ ու դեռ պիտի արձագանգէ արդեօք: Ողբալի վիճակ...: Տղայի Օրերէն ցարդ նոյն ցաւերը, խոշոր պարտքերը, անվերջ հակառակութիւնները, անուրակելի անուանարկութիւնները՝ ռաւակալութիւնն ու քինախնդրութիւնը, ու այն ալ հաւատքի, սիրոյ ու յոյսի վարդապետներուն, Ս. Սեղանի սպասաւորող, Կենաց Բանին պատարագը մատուցանող աշակերտներուն, ըսէ՛ Հայրերուն, Ս. Գլխադրի միաբաններուն մէջ:

Այո՛, այն սուրբ ու պատուական վայրին մէջ ուր Յաւիտենական Աստուած մը, մշտնջենական Սիրոյ վարդապետ, բունութեան դէմ կռուող ազատ հերոս մը, համակ գուլթ, ամբողջ գորով, անձն ու փառք ի սպաս ուրիշներուն տուող, այո՛, պատուական, պատմական ծնունդ մը ծնած է, ի սէր մարդկութեան, ի սէր ազատութեան: Ու ահա հոգն է որ անվերջ

(*) Այս յօդուածը գրուելու տուն, դեռ կատարուած չէր Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութիւնը: Ծ. ԽՄԲ.

կռիւներ, անօրինակ անմիաբանութիւններ տեղի կ'ունենան, ինչ որ Հաւատքը գործերու յաջողութեան հիմք հռչակեց, Սէրը՝ աշխարհի, ատեներու ու անձերու շինութիւնը պատգամեց ու Յոյսը՝ ամբողջ կեանքերու ապրումին միակ նեցուկը բարբառեց:

Ու այսօր, երբ երեքն եւ իրենց բազմապետութիւնովը կը փայլին Ս. Յակոբեանց մկնատանէն, դարաւոր այս Հաւատաւութեան, ա՛յ ինչի տկնկայութիւնը ըլլանք, ու ա՛յ ինչով պիտի պարծինք իրր ուրոյն հաւատաւորութիւն ունեցող գոյութիւն մը:

Միաբանութեանը չափ մտաւի է այդ աւեր վայրը, անոր պատմութիւնը հնուց ի վեր բերնուց զիտեն թէ Ասաքեալներ զուրս եկան, որոնք իրենց պարզութիւնով, նոյնչափ կոտորով ու կորովով աշխարհ մը քարոզեցին արեւելու, հոգինեւր, ու անթիւ շարք մը չէ՛ր որ զերեցին քրիստոնէութեան. ու քրիստոնէութեան նիւթն ու հիւթը Սէրը չէ՛:

Հիմայ, մերոնցմէ զուրս կուգայ ստեղծած տակութիւնն ու անկրօնաւ գէտ վարմունքը զէպ իրենց հոգեւոր ծնողը, զիրենք պատապարտող Հաւատաւորութիւնը: Բայց պէտք չէ՛ գէթ գորով մը՝ հաւատաւոր Հայ Քրիստոնէի արեւելուն ու հոգիներուն հանդէպ, որոնք իրենք Ս. Երուսաղէմի անուան, զեւ թրթիւր մը, սուրբ զգացում մը, անխարդախ հաւատք մը ունին: Ինչո՞ւ այդ թրթիւնեկուն զէմ գործուի, չէ՞ որ թրթիւնի կատար մաս է. ինչո՞ւ զգացումները փետեկաւին. առանց զգացումի մարդը մարդ կը սեպուի. ինչո՞ւ հաւատքի խախտում լինի, չէ՞ որ առանց հաւատքի հոգին անշունչ զիտկի մը հաւատար է:

Սիրոյ վարդապետին ուխտաւած միաբաններուն չի՛ բաւեր այսչափ տակութիւնը, եղբայր եղբոր զէմ մահացու զէնքերով ազատարկութիւնը (զրպարտութիւն, անուանարկութիւն, քինոթնդրութիւն): Եթէ Հայութեան ու Հոյսի ինչ չէ իր ծար, գոնէ քրիստոնէութիւնը մտածեցէք. (վա՛յ այն մարդուն որոն ձեռքովը զայլմակղութիւն կը լինի): Ծիշէ ձեր գարաւոր վանքին համ-

բաւը, արաւթիւնը կ'անտեսէք, գոնէ ստաւածային արաւթեան մը զէմ յարգանք, պատկառանք ու երախտագիտութիւն ունեցէք:

Ս. Յակոբեանց վանքի (Վիտապոյի) պատմական միաբաններ, ուր որ այ գտնուիք, լաւ զիտեցէք թէ նոյն պարտաւորութեան, նոյնմեղադրանքին ու նոյն ազգավճիռ դատապարտութեան տակն էք, երբ իրարմէ պաղած, իրարու քննոտած, իրար բարոյութիւն մեղցուցած, վանքն ու Միաբանութիւնն եւ անոր օրէնքներ մոռցած, կը թողուք ար վանքը կորստեան անել բաւղին մէջ անշարժաց, անհետանայ, եւ դուք անտարբեր հանգիստեաներն ըլլաք անոր մարթաշատկին, անդամահատումին, եւ կամ նոյն ինքն ձեռնէ ձեռքեր գտնուին որ փութայնեն անոր վախճանը, անկումը:

Չէ՛ք ստեղծ ու հաւատաւորութիւն չէ՛ք սեպեր, երբ աշխարհակամներ այնչափ հոգածու գտնուին ու դուք... խնդուքով մը պատախաճէք: Ձեր սիրտը չի՛ մարմնփրկ, ձեր հոգին չի՛ խշխշար, երբ ձեր երեսնելուն չափ անգամ կ'ըսեն ու դուք կը լսէք չափ պարզուկ շինական ուխտաւորին թունդ զգացումներէն պոթկացող սա ցուտի խօսուածքը, որ իր մէջ ահաւոր դատաւճիռ մը ունի, ու այս՝ ամենուր հոսցէին ուղղուած:

—Ախ, ժուր կ'երթաք:

—Երուսաղէմ...

Չէ՛, չէ՛, հաւատքով կ'երթաք բայց անհաւատ կը գտնուիք:

Սա միւսի մը բերնէ ելած ճշմարիտ խօսքերուն ինչ պիտի լսէք, հաւատքի, պաշտօնեաներ, կենաց Բանին վարդապետներ: Պա՛ղ, չափ պաղ սարսուռ մը չի համակեր ձեր ամբողջ գոյութիւնը, ահաւոր ցու մը, խորունկ վիշտ մը, որ իր մերկապարանոց գոյութիւնովը կը սպառնայ դարերու անեղծ հաւատքին: Եւ որո՞ւ պատճառաւ: —Կրօնի պաշտօնեաներու: Ա՛յ, ո՛չ, մի՛ փութաք, մի՛ սրաղէք մէկ մէկու զէմ յոնցանքը, թերին, պատճառը Սարկոս մը եւ Կիրակոս մը չեն լոկ, այլ ամենայն որ ունիք ճակատնուր միաբանութիւնը. բայց ան մասնիկը չէ՛ք մոռցած մակդրեղ միշտ:

Նայեցէք, երկու դարու Հայ ուրիշ Միաբանութիւն մը՝ ազգը իր լեզուովը իր պատմութիւնովը փառքերու տարաւ։ Իսկ դժբ, դէպ ի ետ, ու որչափ ետ։ Գիրք ու գրադարան պատրաստ, տիպ ու տպարան կազմ, շէնքեր առատ, սեղաններդ լոյսերու մէջ կը շողան, միայն մտքերն են որ իրենց բաժինը չունին։ Գանձարաններդ արքայական, սպաններդ իշխանական, լեռնայիններդ անթիւ, սակայն ինչի՞ կը ծառայեն և ինչի՞ ծառայած են։

Չէ՛ք արդարանար և ոչ մէկը. մեղադրանքի ծրարոցը, գաղապարտութեան վճիռը ամենիդ գլխին է, ու աւելի մեծ բաժինը անոր գլխին որ ստեղծեց պատճառը, ու ամենը դուրս եկան իրենց իսկական գոյներովը։

Մեղք է, սիրելի Հայր Սուրբեր, մեղքը քէք։ Տեսէ՛ք, լեցէ՛ք արիւն արցունք թացող խեղճ ձեր հայ աղբորտիքը. մեղք են. անոնց գլխին մի՛ բարդէք ցաւ ու պարտք, զի իրենցը՝ իրենց համար շատ է։ Հապառատներուն խօսքերը, արդար զիստու թիւնները, որոնք դուցէ շատ անկեղծ սրտերէ դուրս չեն գար։ Այլ ժամանակ է որ թօթուէք իրար ետիւ իմի խոյն հախանձի բոլոր թոյները։ Ձեր մատուցները, աշխատանքը, հոգածութիւնը, եռանդը, խանդը ըլլալու են միայն և միայն վանքին շինութիւնը, յառաջդիմութիւնը, ու այդ համագործակցութիւնով, եղբայրութիւնով, և իրարու ներելով, իրարու արժանիք ճանչնալով, խոստովանելով ու գնահատելով կը լինի։

Եթէ ցարդ ձեր ծախսած գրամները, (թղթատարի, հեռագրի, մարդ ու միաբան շահելու, նուէրի և այլն) յատկացրնէիք գիր ու գրականութեան, գալոցի ու գալուցիական, գոնէ քայքայուած, գործածութիւնէ դադրած սենեակներու, հողերու շինութեան, դարձեալ մեծ շահեր ունեցած պիտի լինէիք։

Հայր Միաբաններ, ո՛ր են, քանի՞ գրագէտ ու հնագէտ, քանի՞ գեղարուեստագէտ ու բանաստեղծ. քանի՞ պատմաբան ու ընկերաբան, քանի՞ սոստուածաբան ու հմտաբան ունիք, ու քանի՞ Վարդա-

պետ, Սրբազան, որոնք գէթ Նախնեաց սուր ու հուր հաւատքովը երևին։ Գէթ առաջները ունեցած է ձեր Միաբանութիւնը, որոնք աւելի նեղ ու դժուարին օրերուն ամեն անձնութիւնը ցոյց տուեր են, ու հիմայ մենք (ժողովուրդ) ամենամեծ անձնութիւնը պիտի ընդունինք, երբ միաբանիք սրտով ու հոգով, կամ քաջ ըլլաք իրարու ներելով ու զիջանելով, կամ աւելի քաջ գտնուիք, Միաբանութիւնը ձգէք դուրս ելնէք, խոստովանելով թէ «մենք միաբանութեան արժանի չենք»։ Հաւատացէք որ ազգը երախտագէտ պիտի մնայ ստանկներուդ։

Շուրջներդ դիտեցէք. քանի՞ հոյակապ վանքեր, միաբանութիւններ, գալոցներ, հիւանդանոցներ կը բարձրանան, ու մերը օրէ օր կ'անշքանայ։ Օրինակ՝ խղճուկրակ միակ ժառանգաւորացը, որ բացի աշակերտ հասցնելէ, ամէն բանի պիտի ծառայէ. հիմայ չէ թէ լոկ վանք մը պիտի ունենայիք հարուստ, ճոխ, յառաջադէմ, օրուան պահանջներուն ու պէտքերուն բաւող, այլ ան իր թեւերը պիտի տարածէր ու հովանաւորէր մինչև հեռուները, ուր իր զաւկները բրդուծ մը հացին, կտոր մը հագուստին ա՛խը կը քաշեն։

Լսեցէ՛ք, Սասունցին անօթութեան, Ձէյթունցին սովէն, Մչեցին տառապանքէն. Բաղէշցին ու Վանցին անգործութենէ ու զուլու՛ն կը մեռնին, ու դուք առանց խղճահարուելու կ'եմէք կը յայտարարէք թէ 40,000 Սոմ. ոսկի պարտք ունինք։

Ձե՛ս խղճար, չե՛ս սոսկար։

Գիտցի՛ր Հայորդի, սիրելի Միաբան, թէ քանի՞ բիւրաւոր պարտքեր կան, որոնց յոացումը մէյ մէկ կ'անքեր պիտի ազատեն, մէյ մէկ աւեր առնեն է որ պիտի չլինեն։

Ու փոխան տաանկներու օգնութեան հաւանելու, անանկներէն օգնութիւն կ'ակընկալէք. այո՛, կ'ակնկալէք որ ձեր անհաշիւ միաբաններուն գումարը այդ խղճերը վրձարեն. ինչ ըլլած ըլլալու համար, անմիաբաններու օճախ մը չէն պահելու, Հայ անունը նուստոսացնողներու խմբակ մը կըլտացնելու համար։

Ձէ՛, չէ՛, պատուական Հայրեր, մենք ձեռնէ կը սպասենք հայրենասիրութեան զգացում ու անօրինակ խայծ ու կայծ, և որ աւելին՝ Բրիտանիայի տաքուկ Հաւատքը, բարի Հօր Տեսչութիւնը դէպ ի Ս. Մենաստանը ու վայրերը Սիրոյ Վարդապետին. Սէրը դէպ ի ձեր եղբայրները մօտէն ցնեւուն, և Ս. Հոգւոյն Ծնորհն ու իմաստութիւնը որ այդպիսով վարէք անձ, հոգի ու յանձնուած պաշտօն:

Ժողովուրդին ցաւերը շատ են, նորեր ևս մի՛ բարդէք, ու գիտցէք թէ երբ ժողովուրդը Երուսաղէմը կը լսէ, անգամ մը կը ցնցուի, և բնական է: Ա՛յ վերցուցէք սա լառերը՝ «հաշուեխոյս» ու «հաշուեպահանջ»: ա՛յ մէկի զրէք Պօղոսեան ու Ապօղոսեան, իրարու ընդ աւիմբ մի նայիք, պաշտօնի ու պատուանունի համար իրարու ճակատ մի՛ խարանէք, լաւ խօսեցէք որ լաւը ունենաք: Բարի ու չինարար թելադրութիւններու անտացէք, չինեմ ըսելու տեղ մի քակէք:

Թուրքերէն առածը կ'ըսէ. «Էմանէթէ իրջանէթ օրմազ»: Ձեզի յանձնուած է մեծ աւանդ մը, նիւթապէս ու բարոյապէս գերազանց նութիւն մը. լաւ պահպանեցէք, ներկան որչափ ձեռնէ հեռի ապրիլ կ'ուզէ, ապագան ալ նոյնչափ անողոք պիտի գտնուի ձեր անուններուն հանդէպ: Իրարու մօտեցէք, իրարմով լրացուցէք պէտքեր ու պակասներ:

Ամէն անգամ որ քննիչ մը, պատուիրակ մը իր պայուսակները կը ժողվէ ձեզի գալու, ձեր պատիւէն, ձեր նկարագրէն, ձեր միաբանութէնէն բան մը վրայ կուտաք: Կը սպասենք որ գիտակցութեան դաք, զի ժողովուրդին զայրոյթը պոռթկումի մօտեցած է:

Պատկ. Ազգ. Վարչութիւնէն ալ պիտի խնդրենք որ քիչ մը արագ գործելու ու վերջացնելու շնորհը ունենայ. զի մէն մի վայրկեանը ոսկի է որ կը ծախսուի, և պարտքն ալ գրուին տներ կ'երթայ: Մէկ ոսկի պիտի շահինք ըսելով տառն ու քսան վրայ չտանք. արմատական, կտրուկ, կտրովի ու բացարձակապէս անկողմնակալ որոշում ու գործողութիւն կրնան ազա-

տել Երուսաղէմի դարաւոր ու փառաւոր վանքը կորուստէ, մեռելութենէ ու փրտախտէ մը, որ զանկրեկ ըլլալու ճանքուն մէջ մտեր է: Օրէ օր ձգձգել, ժողովէն յանձնաժողով, յանձնաժողովէն վարչութիւն, քննիչ, տեղեկագիր և այլն ըսելով պարտքը 40,000 ոսկիի պատկանելի գումարին հասաւ: Եթէ այս 40,000 ոսկին հողային հարցի կամ սովեալ գաւառին հասցնէինք, ամենամեծ գործը կատարած կը լինէինք:

Ներուի մեզ ըսելու թէ շատ անգամներ լաւ ծրագիր, կտրուկ որոշում ու գործադրութիւններ մէջտեղ բերողներ կը լինին, ինչպէս և բերող ալ գտնուեցաւ, բայց մենք Հայերս ծայրայեղութիւններու աշակերտող ենք ընդհանրապէս, ո՛ր և իցէ անհատ մը, կամ պաշտօնեայ մը և կամ կուսակցութիւն մը երբ մի որոշ ծրագիր դուրս կը բերէ, երբ կը սիրենք, կ'ընդունինք ամեն ծայրայեղութիւն, ու նոյն ինքն մեր շահերուն, բարքերուն, զգացումներուն հակառակն ալ, իսկ երբ կ'ատենք ու պաշտած ենք ամենէն ա՛յ, ի՛նչ լաւ, օգտակար, փրկարար խօսք, գործ, թելադրութիւն, ծրագիրներ մէջտեղ բերուին, անպատճառ չենք ընդունիր, գիտնալով իսկ թէ մեծ կորուստներ կ'ունենանք. կը բուէ որ այս ինչէն կամ այնինչ կուսակցութիւնէն է: Ահա՛ մեծ սխալնիս, թերինիս: Երուսաղէմի գործերը ընդ միշտ կանոնաւորելու առաջարկներ, ծրագիրներ բերողներ եղան, բայց չընդունուեցան: Ինչո՞ւ, որովհետեւ այս ինչ հատուածէն կամ անձէն կուղար:

Ու ահա զրութիւն մը, որուն առջեւ Միաբանութիւնը ծափ զարնել սկսաւ, ու իր յանգեցնութիւններու, հետեւանքն այսօր մէջտեղ է:

Հիմայ կարգն եկած է Երուսաղէմի Պատրիարքութեան խնդրոյն, ու կրկին տկանատես ու ականջալուր եղանք Միաբանութեան ախուր հոգեբանութեանը, լարուած, սարքուած մտայնութիւններուն, ջղայնութիւններուն, ուրկէ ամբողջ շարք մը կուգայ դուրս ամենի սրտէն ու հոգիէն: Նոյն կոյր նախանձո-

տուժիւնը, ատելութիւնը և ոչ թէ՛ Վանքին, Ազգին, Կրօնին պատուի նախանձախնդրութիւնը:

Ահա՛ այս կրողութեան առջեւ, կը մնայ Ազգին ներկայացուցիչներուն՝ անկեղծ, որոշ, փրկարար քուէարկութիւնը, առանց տարուելու սա ունա հոսանքներէն, որոնք միշտ վնասաբեր եղան թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյապէս:

Երուսաղէմի բարեկարգական հարցը ճիշտ դժբաղդ Հայ նահանգներուն բարեկարգուելուն նմանը եղաւ՝ դռնէ դուռ, հոսանքէ հոսանք, հատուածէ հատուած, և վերջը...: Ուսկից պիտի սպասենք, յանձնաժողովներէ՞, քննիչներէ՞, պատուիրակներէ՞: Ա՛յ, ո՛չ, այլ անկեղծ աշխատութենէ, կամեցողութենէ ու բացարձակ անկողմնակալ որոշում ու զործադրութենէ:

Ընչդ է թէ վերաբոյժ մը երբեք սիրելի չէ այն հիւանդին որ վէրքեր ունի. զի հիւանդը նշգրտակէն կը սոսկայ, կը փախի, աւարկութիւններ կը յարուցանէ, միջոցներու կը դիմէ, բայց առանց նշգրտակի ալ փրկութիւն չըկայ. ու երբ բժիշկը ճարտարօրէն կը գործածէ և նեխած փսած մանրը կը հանէ, ահա վէրքը կը սկսի բուժիլ. սոսկացող հիւանդն է որ մահէն ազատուած կենսապարգեւ բժշկին ձեռները կը լիզէ:

Ուրեմն կեդրոնի վարչութիւնը թող նշգրտակ ձեռք առնէ, ա՛յլ բաւէ. այդ բարերար նշգրտակը կեանք պիտի պարգեւէ. և թող չվախնայ թէ երբ փոստատ կտորները վերցնէ, նորեր չպիտի գան:

Հիւանդը մահամերձ է, վէրքը գանկրեմ է, բաւեցը դեռ հաւանական է: Օ՛ն ուրեմն, ա՛յլ ազգին կրօնքին, անունին, համբաւին այդմեծ Հաստատութեանը մեղք է, մեղքնանք: **ՄԱՆԴԱԿՈՒՆԻ**

ԿԱՂԱՆԴ. — Փրցուած էջեր կեանքի հատորէն. գրեց Թեոդիկ. — Սրտայոյդ նորապէսներ, օրաթերթերու մէջ ցրուած, նաեւ անտիպ յուզիչ հատուածներ զօրս թէոդիկ միայն գիտէ գրել, ուշադրաւ է մասնաւորապէս կաղանդի վրայ հմուտ ուսումնասիրութիւն մը: Ի՛նչ ներկայ Ա. հատորին 6 զրշ.: Ս. Արզուման ճաշակաւոր տպագրութեամբ յանձնարարելի հատոր մը:

ՃԱՄԱՌԻ ՅՈՒՇՔՆԵՐԷՍ

Թ Ի Ֆ Լ Ի Չ

ՎԱՆՔԻ ԱԻԱԳ ԵԿԵՂԵՑԻՆ ԻՐ ԴԱՄԲԱՐԱՆ

Թիֆլիզի յիսուն երկու եկեղեցիներուն Աւագն է՝ վանքի եկեղեցի կոչուածը, այսինքն Թիֆլիզի Հայոց Սայր-եկեղեցին, ուր կը բարձրանայ նաեւ փառաւոր Աւաջ-նորդարանը:

Երբ Թիֆլիզ դեռ այսչափ ընդարձակուած չէր, Վանքը Կուր գետի ափին մօտ, քաղաքէն դուրս բաւական հեռու տեղ մըն էր, և Հայոց հին Առաջնորդներն ալ կը բնակէին այդ վանքին մէջ: Բայց երբ Թիֆլիզ սկսաւ զարգանալ և դառնալ վաճառաչան մեծ քաղաք մը, և երբ Հայերը սկսան առնել կողմէ հաւաքուիլ հոն, Վանքը խնդրեց չլքուիլ իր անցաւոր փառքը և շուրջը շինարարութեամբ փոխուիլ իր նոր տուններէ և շուկաներէ, և սուաւ իր այսօրուան դիրքը: Ընդարձակ բակի մը մէջտեղ կը ցցուի Աւագ եկեղեցին, երեք դռներով և Տաճարի շէնքին անհամաչափ խոշորութեամբ կաթողիկէ գմբէթներով: Տաճարի արեւելեան հարաւային կողմին վրայ երկարած է Առաջնորդարանը, իսկ արեւմտեան կողմը, եկեղեցւոյ արտաքին մեծ դրան մօտ, Ղուկասեան թանգարանը:

Վանքի Աւագ եկեղեցւոյն մէջ իմ ուշադրութիւնս գրաւեցին առնէն աւելի գերեզմանները: Առաջնորդարանը վայելուչ է, փառաւոր է նոյն իսկ, բայց շատ չէ Թիֆլիզի պէս քաղաքի մը համար: Եկեղեցին հատարակ շինութիւնով մը, նեղ, խճողուած քառակուսի հաստաբետա սիւններով, Հայաստանի այնքան հռչակաւոր և ճարտարապետական ինքնուրոյնութիւն ցայտեցնող շէնքերէն չէ: Ընդհակառակն խոշոր ծախք մըն ալ եղած է ատօր վերա-նորոգութեան համար, և այս վերանորոգութիւնը այնքան պոռոտ եղած է ներսէն և դուրսէն, որ կը ցաւիս վասնուած հազարաւորներուն...: Վասն զի այդ ծախքը քիչ մըն ալ ուռեցնելով՝ կարելի էր բոլորովին նոր եկեղեցի մը կերտել շինին տեղը, զոր օրինակ, Անիի Սայր եկեղեցւոյն ոճով,

որ վայելէր Աւագ եկեղեցի կոչումին և Թիֆլիզի Հայութեան պատուին: Եւ այսպէս պէտք էր ընել, որովհետեւ Թիֆլիզի Առաջնորդարանը՝ Կաթողիկոսարանի ալ կը վերածուի երբեմն, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Թիֆլիզ գայ Մայր-Աթոռէն և մնայ հոն: Վանքի եկեղեցին ահա քան նեղ է, որ պաշտօնական հանգիստադրութեանց առթիւ հազիւ կարելի կ'ըլլայ հրաւիրեալները միայն ներս ընդունիլ, և բուն ժողովուրդը կը մնայ դուրս, կամ բնաւ չուզիր գալ եկեղեցի, գիտնալով որ տեղ չկայ հոն իրեն համար:

Բայց Վանքի եկեղեցիին բակը շատ հետաքրքրական է իր դամբարաններով: Եկեղեցիներու մօտ թաղուիլ Հայոց հնագոյն և բարեպաշտ սովորութիւններէն է, և Հայոց բոլոր եկեղեցիներ, մանաւանդ հիները, և մանաւանդ հիները, և մանաւանդ չորջապատուած են գերեզմաններով: Վանքեր կան որ պարզապէս թագաւորական կամ իշխանական գամբարաններ են: Մշոյ Ս. Կարապետին յատկը Մամիկոնեանց դամբարանն է: Մշոյ Ս. Առաքելոցը՝ Թարգմանչաց: Շիրակի Մարմաշէնը՝ Պահլաւուն կաց, Սանահին՝ թագաւորական գերեզմաններ ունի և եղած է հին և նոր Արղուսեանց դամբարանը: Հաղբատի իշխանակոն դամբարանները շատ ուշագրաւ են, ինչպէս Հոռոմոսի վանքի գամբարանը: Եկեղեցւոյ հովանիին տակ թաղուելու փափաքը այնքան բուռն եղած է, որ թագաւորներ և իշխաններ յատկապէս եկեղեցիներ և մատուռներ շինել սուլած են իրենց կենդանութեան, և կամ մեծ նուիրատուութիւններով միաբանած են եկեղեցիներու և վանքերու, իրենց վախճանումէն ետքը հոն թաղուելու և կրօնաւորներու մշտամրմունջ աղօթքներուն մէջ յիշատակուելու համար: Մանկութեանս օրերէն շատ խորունկ տպաւորուած են մշտափառ՝ սրբավայրերը չորջապատող այս գերեզմաններ: Կը յիշեմ ծննդավայրիս, Այնթապի հին եկեղեցիին բակը, որու սալայատակին հաւասար կարմիր մարմարէ ստապանաքարերու շարքերը և ատոնց բարձ-

րաքանդակ գրերը կը դադեցնէին զիս, և դժուար կը քակէի ատոնց ազուցիկ գրուածները:

Եկեղեցական հին իշխանութիւնը, գերեզմանները քիչ մը հեռացուցած ըլլալու համար եկեղեցիներէն, կանոն մը դրաւ, որ կը հրամայէր քան որ կամ կանգուն հեռի փոքր գերեզմանները եկեղեցւոյ պատերէն: Բայց կ'երևի թէ ոգուտ չէրած այսպիսի կանոնադրութիւն մը. վասն զի լսաւորաւ որ ննջեցեալներ ունեցած են իրենց գերեզմանները թէ՛ եկեղեցւոյ շուրջը անմիջապէս և թէ՛ նոյնիսկ եկեղեցւոյ մէջ:

Եւ Թիֆլիզի վանքի Աւագ եկեղեցին կ'երևի, թէ սկիզբէն ի վեր լսաւորաւոր եղած է նշանակելի գերեզմաններով: Կարելի չէ որ ունէ այցելու չհասաքրքրուի հոն շարուած ստապանաքարերով: Վանքի մը անգամ առանձին առանձին աչքէ անցուցի այդ գերեզմանները, և վերջին անգամ ուղեցի ատոնց համառօտ մէկ ցանկը չինել: Բայց ո՞ր մէկը ցանկելու էր: Շատ մը գերեզմաններ արդէն մոռցուած են և ատոնց ստապանաքարերով սաղարկուած են Աւագ-եկեղեցւոյ շուրջը: Ատոնց ստապանաքարերը եղծուած մաշած են: Կարգ մը գերեզմաններ ալ կան անշուշտ բոլորովին անհետացած: Ատոնց ամէնքն ալ ատոնէ մը իրենց կարգին ուշագրաւ էին. հետաքրքրելի այցելուներ կը ծնէին ատոնց վրայ, կը կարգային ստապանաքարները, կը քննէին քանդակի և շինութեան ոճը: Անաւարտիցս ատոնք լացողներ ալ ունէին, որ երբեմն երբեմն կուգային խորհրդաւոր այցի, մրմունջ մը աղօթքով, ահ մը յուշքերով կամ լուռ խորհրդազգածութեամբ մը: Կ'ըսէի ինքնիրենս. Օր մը այս փառաւոր քարերն ալ տեղի պիտի տան նորերուն. այս մարմարները, այս կրանիքները, այս երկաթի վանդակները պիտի կորնչին, նորերը պիտի գան: Եկեղեցւոյ արեւելեան սրբարկոյցն վար Կուրը կը թաւալէ իր մշտնջենական հոսանքները, նոյն, բայց միշտ նոր ջուրերը կը լեցնեն իր անկողինը. հո՛ս, այս եկեղեցւոյ հովանիին տակ, կեսնքի հոսանքներն են որ կանգ կ'առնուն, մէկ երկու սերունդի աչքերուն առջև գոնէ

նիւթեղէն յիշատակարաններով կործարւալ համար ասիկին և ցուրտին, մրրկին կամ սիւքին, կը հանդիպին այցելուներէն ունայ հիացումին, ունայ խժըմանքին, և հաւատացեալ հոգիներու «Աստուած ողորմի» խնկի մայիւնքներուն: Ասանք չուտ անհետին կամ ոչ, եկեղեցին միշտ կ'որհնէ յիշատակն անոնց, «որք ընդ հովանեաւ սրբոյ տաճարիս են հանգուցեալ»:

Ինչպէս ըսի, ես ալ, այցելու մը, հետաքրքրուեցայ գիտնալ թէ ո՞րոնք եկած հանգչած են վանքի Աւագ-Եկեղեցւոյն հովանին տակ, և առաջին անգամ գտայ ինքզինքս Սանատարեանի ժամարձանին առջև Մկրտիչ Սարգսեան Սանատարեան 1818—1890(*): Եւ հետզհետէ նշանակեցի Մամբրե Եպս. Սանատարեանց + 1892: — Պօղոս Իզմայրեան Թիֆլիզի քաղաքագլուխ, 1851—1895, չիբին ալ Թիֆլիզ քաղաքէն շնորհած: — Ինֆանտերիայի Գլխերայ Յակոբ Կայստարովեան Աշխադեան 1826—1896: — Խորեն Եպս. Սեպանե 1840—1900, Ռուստայ տաճարաբարձ քարոզիչ, և աշխարհաբար թարգմանիչը Խորենացւոյն և Բ. Փառաստի: — Տփլիսի Տոն. Պատ. քաղաքացի Եգոր Զոհրաբեանց, 1830—1908: — Արիստակես Արեպս. Աղբալեան, 1845—1906, Էջմիածնի կարող միաբանը և Առաջնորդը Թիֆլիզին: — Եսայի Արեպս. Աստուածաբանց + 1901: — Յովնանեկ Սեպանեան Խասխեան 1837—1894: — Անուաւան Աստիճանաւոր Դաւիթ Գեորգեան Սուրենեանց, 1815—1860 և Անուաւանի Տիկ. Եսիսեկ Սուրենեանց, 1820—1895: — Թիֆլիզի առաջին կարգի վաճառական Յովսէփ Դաւթեան Աղբալեանց, 1818—1890: — Գեորգ Բենյ. Գալստեանց, 1846—1896 և կողակիցը Նունե 1852—1905: — Փոխ-գնդապետ Իսահակ Յովսէփեան Տեր-Սեպանեանց, 1806—1892: — Յովսէփ Յովնանեկեան Էփեհեանց + 1862, 56 տարեկան. («Յիշատակ նորա է կտակ յօգուտ Տփլիսիս Լայոց Ներսիսեան աղ.

գային հոգեւոր զպրոցի») և կողակիցը Նունե Էփեհեանց 1821—1891: — Վաճառական Կարապետ Աղբալեան Կեստրայի, 1838—1861: — Տէր Թադէոս Խօջաէնիտ-թեանց Աւագ Բենյ. Վանայ Աւագ-Եկեղեցւոյ, 1835—1887: Յովսէփ Աւագ Բենյ. Օրբելի, 1808—1891: — Պետրոս Սամուէրեան Շանչեանց, 1818—1889. Կող-կտաի Լայոց քրիստոնեայ-փոխտապան, որու գեղաքանդակ տապանաքարին ճակին տրամադրուած է. «Մանկունք ընկալաւ զՍաւառմի Պարսուց (Աշխատատիրութիւն Պետրոս Շանչեանի) իբրեւ սկիւմանեակ ի պարանոցս ձեր»։ Արիմեան Լայրիկ (*) : — Սարգիս Արեպ. Լասան-Ջալալեանց, 1810—1879: — Դաւրիթ Արեպ. Այվազեան, 1812—1881. գիտուն և բնագիտական նախնին Միլիթարեանը: — Տփլիսի քաղաքը իւր արժանաւոր զաւակին Գեորգ-Լէյտնանտ Արշակ Յարութեան Տեր-Ղուկասեանցին, 1819—1881: Գէնէրալ Մայիօր Բենքուդ Մարտիրոսեան Եղկովիկեանց, Նուի-1837, Լասան-Կապ 1878: — Կոմս Միքայէլ Կոմս-Միլիթան, 1824—1888: — Արգար Յովնանեկեան, 1849—1904. «Երախտագէտ հայ ժողովրդից: Տաղանդաւոր խմբագիր-հրատարակիչ «Փորձ»ի, «Իրձաղանք»ի, Armenische bibliothek»-ի եւ հասարակական գործիչ»։ — Իշխան Կոստանյիկ Աղեմանց Բենքուդեանց, 1847—1907: — «Աստ հանգչի մարմին Աստուածասուր Աւագ Բենյ. ի Լայոց Տեր Աստուածաբանց, որ յիս 59 տակայ անարատ ծառայութենէ իբրեւ Աղբալեանց Տեառն, հանգեաւ ի Տէր ի 26ն Դեկտեմբերի 1862 տմի, ի հասակի 86 ամաց»։ — Գէնէրալ-Լէյտնանտ Սեպանոս Յովսէփեանց + 1897: — Յովնանեկ Դաւթեան Լազարեանց, 1820—1879, և Աննա Դաւթեան Լազարեանց. 1836—1878:

Աւագ Եկեղեցւոյ արեւմտեան կողմը, արտաքին մեծ զրան քովը, կառուցուած

(*) Սանատարեանի կողքին թաղուեցաւ դեռ նոր, Մեղու Լայստանի խմբագիր և աղբային գործիչ Պետրոս Սիմեոնեան, ծն. 1830, դեկտ. 11. 1911 յուլ. 5:

(*) Թիֆլիզի նորագ հանգուցեալ Առաջնորդ Ստեփանեան Դաւթին Արքեպիս գերեզմանը դրուեցաւ Շանչեանի քով Ստեփանեան վախճանեցաւ 1910 նոյեմ. 3 Դշ. և թաղուեցաւ Նոյեմ. 7 կիր:

է գմբէթաւոր երկյարկանի չէնք մը, սպիտակ և կարմրագոյն քարերէ: Ստորին յարկը Ղուխսեսանի դամբարանն է(*), իսկ վերին յարկը, կրօնա-պատմական թանգարանը, որու ճակատը դրուած է պղնձէ տախտակ մը սա՛ յիշատակարանով. — «Եկեղեցական թանգարան կառուցաւ ի հայրապետութեան Տ. Տ. Մկրտչի Սըրբազնագոյն կաթողիկոսի Ամենայն Հայոց, յառաջնորդութեան թեմիս Տ. Գէորգ Սրբազան Արքեպիսկոպոսի, արդեամբ և ծախիւք բարեպաշտօն Աւետիսի Բաղայեան Ղուխսեսանց. ՌՅԽԸ—1900»:

Հիմայ այս թանգարանին հիւսիսային կողմը, անկիւնը, կը շինուի դամբարան մը, Մանթաշեան գերդաստանի համար, կարծեմ 30,000 բուպի ծախքով մը(**):

Ահա լէգէոն մը ապրուած կեանքերու: Դրամի մարդը, գրչի մարդը, զէնքի մարդը, լեզուի մարդը, Աստուծոյ սեղանին մարդը, անտարբեր քրիստոնեան և եւանդուն հաւատացեալը, ամէնքն ալ ազգի՛ մարդիկ, անխտիր ապաստանած են իրենց Մայրենի եկեղեցւոյ հովանիին, լռիկ մընջիկ: Ես չուզեցի նկարագրել ասոնց տապանաքարերուն և մահարձաններուն պէս-պիսութիւնը: Նո՛յնպէս չուզեցի ընդօրինակել տապանագիրները: Ամէնէն պարզ քարէն մինչեւ ամէնէն թանկագին կրանիթներ, նշանաւոր գործարաններու մէջ բանուած, ամէնքն ալ տխուր չքեղութիւն մը կը ստուերեն: Բոլոր տապանագիրներն ալ, երբեմն պարզ տնուն և մականուն և թուական, երբեմն գովքով յիշատակութիւններ, ոմանք տիպոգրաֆիք և աստիճաններու շարքով պերճ, ոմանք խրատիչ բացատրութիւններով խորհրդաւոր, թէև առ հասարակ նոր ձեւերով և ոճերով արտայայտութիւններ, անմասն հին տապանագիրներու:

Բայց այս բոլորն ալ կը յորդորեն, մարդիկ, աննշան մի՛ մեկնիք անցաւոր և թերեւս յանցաւոր բաւած այս աշխարհէն...:

ԲԱՔԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(*) Այստեղ թաղուեցաւ Ղուխսեսանի վերջին շառաւիղը, Օր. Թ. Ղուկասեան, և խոշոր հարուստութիւնը, կտակին համեմատ, մնաց ազգին, թուրքիւյ մէջ բարձրագոյն ուսման նուիրուելու համար:

(**) Եւանթ բարերարողը թաղուեցաւ այս տեղ՝ իր կնոջ մօտ:

Յ. Գ.—Կովկասի Հայութեան աչքին Բանթոն մըն է Թիֆլիզի վանքի Աւագ եկեղեցւոյ յարկը, և հարկ է որ նոն թաղուելու պատիւը ազգին նշանաւոր զաւակներուն միայն վերապահուի: Ես բոլորովին գաղափարակից եմ Պ. Հ. Առաքելեանին, որ էջմիածնի Սինօլին զէմ խոսիւ բողոքեց Մշակի մէջ (թիւ 27, Դժ. 8 փետր. 1911). անպէտ հարուստի մը թաղման առթիւ — դրամով գերեզմանի տեղ տալու վանքի յարկէն այն հարուստներուն, որոնք իրենց կեանքին մէջ հարուստ չեն եղած Ազգին համար: Կատարեալ իրաւունք ունի Մշակը իր բողոքին մէջ: Մեր հարուստներուն սորվեցնելունք որ դրամը ամէն բան չէ: Ազգը ինքը պէտք է իր երախտագիտութիւնն ու գնահատումը յայտնէ իր հարուստ զաւակներուն՝ ինքնին ցոյց տալով անոնց հանգստեան վերջին տեղը, իր նուիրական յարկերու հովանիին տակ:

Բ. Ե.

ՌՈՒՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՆՔԱՆ ԱՂԲԻՒՐԸ

Ուրկէ՞ կը սահիս դուն, ո՛վ լեռնն աղբիւր. ուրկէ՞ կուգան քու տհալագոյ ջուրերդ, ո՛վ կանչեց քեզ մութ խողովներէն. ո՛վ բղխեցուց մաքուր աղբուքներդ հողէն, միթէ՞ լեռան գաղաթը օծող լուսափայլ ճառագայթը, որ հալեցուց սառւյցներու կարծր կեղեւը:

Միթէ՞ երկրին սիրտը, աղբիւր յորդեռանդ, որ խողովացած է գաղտնի ճամբաներու մէջ:

Ուրկէ՞ կուգաս դուն Գաղղը է երազել քու արծաթափայլ ալեմկներուդ մէջ, կամ սուգուիլ դաղանաւար ջուրերուդ ծոցը: Դաշտին հովիւները կ'ախորժին հնչեցնել իրենց փողը ջուրերուդ մօտ, և մոտղաշ պարմանիները ալքերուդ մէջ կը մտեն իրենց ցախէ թակոյկները:

Ո՛հ, դուն երաժշտին երգն ունիս ու բանաստեղծին քերթուածները: Ըսէ՛, ուրկէ՞ կուգաս դուն, և ինչո՞ւ համար:

Ո՛վ կանչեց զքեզ տիեզերքի տնդուղիին մէջ, ո՛վ փնտռեց զքեզ հոն. գաղտնիք մըն է տմենուն համար: Սակայն քաղցը է ունկնդրել ներգաշնակութիւնդ. սիրուն տաղաչափութիւնդ. թրթռուն թոթովանքդ, ու քեզմէ սորվիլ կեանքի հաճոյքը:

ԱՐԱՂԻՆ ՄԱՅԳՈՅ

Թարգմ. Գաղղ. Դ. ԳԱՊԴԵՆՃԱՆ

(*) Ռուսիոյ ինտերգալի բանաստեղծներէն է Արշոյն Մայրոֆ եւ հայր Կ. Պոլոյոյ ռուսական դեսպանատնի բարգման Մ. Մայրոֆի: Ծ. Բ.

ԹԵԼԱՂԻՒՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿՆԵՐՈՒ ԾՐԱՐԸ

Յակոբ Տիգրանեան բոլորովին ջլազբըզիւ վիճակի մը մէջ իր սենեակը մտաւ։ Իր գործը չէր սիրեր, ո՛չ ալ իր գործատէրը։ Աշխարհս իր դէմ հակառակութեան ու թշնամութեան ոգիով մը լեցուած կը զգար, ու սկսաւ իր քանի մը կտոր ըզգեսաները և ուրիշ իրեղէնները հաւաքել, ու «մէկ կողմ կորսուել երթալ», ինչպէս կ'ըսէր ինքը։

Հաղիւ տամբեօթը տարեկան որբ աղայ մըն էր, աշխարհի մէջ մինակը իր ճամբան գտնելու դատապարտուած։ Ամենա ալ գիտենք այն փորձութիւնները, որոնք կը չրջապատեն այսպիսի պատանիները, և Յակոբ ալ փորձութիւններու առջև դիւրաւ տեղի կուտար, ու անոնց դիմադրելու պէտք եղած զօրութիւնը չուներ։

Իր քանի մը կտոր իրեղէնները, զգեսաները հաւաքեց, և սենեակին մէջ չորս դին նայեցաւ, տեսնելու համար թէ բան մը մոտցած էր առնել։ Սեղանին վրայ մնացած էին չորս նամակներ, զորս իր մայրագիրէն ստացած էր իրենց քաղաքէն բաժնուած երկու ամսուան ընթացքին։ Այս մայրագիրը իրական մօրմէ մը շատ աւելի եղած էր անոր. որովհետեւ իբրեւ իր սրտահատոր զաւակը կը գուրգուրար անոր վրայ, ու ամէն տեսակ աջակցութիւն ու խրատ չէր զլացած անկէ։ Յակոբ այդ նամակներն ալ առաւ աճապարանքով ու միւսներուն քով դրաւ։

—Ա՛յ իմ մասիս լսել պիտի չուղէ, ես ա՛յ չեմ կրնար գրել անոր թէ գործս թողուցի ու փախայ։

Բայց նորէն սիրտի բաբախումով ու կարօտով առաւ նամակները, զգուշութեամբ ծրար մը ըրաւ զանոնք, ու յետոյ միւս տաքիկներուն հետ խնամով զետեղեց սնտուկին տակ։ Բայց երբ այն քաղաքէն մեկնեցաւ և ուրիշ տեղ նոր գործի մտաւ, հոն փորձութիւնները աւելի անտանելի եղան, ու Յակոբ չկրցաւ անոնց առնելուն ալ դիմադրել։

Ամեն անգամ երբ կը խորհէր իր մայրագիրին՝ Տիկին Պետրոսեանի գրել, կ'ամէնար անոր իր կեանքին մասին գրելու։ Դեռ ունէր քիչ մը արժանապատուութիւն սրով իրեն ամօթ կը համարէր անոր գրել ու վիճակը չտեղեկացնել։ Ի՛նչ ալ խորհեցաւ՝ վերջապէս չկրցաւ զայն խաբելու փորձ մը ընել։

Այսպէս, թէև Տիկին Պետրոսեան, առանց հասցէի փոփոխութենէ տեղեակ ըլլալու, նորէն ու նորէն գրեց Յակոբի. բայց կը զարմանար թէ անոր նամակները յանկարծ դադրեցան։ Բայց ազնիւ տիկինը նորէն կը շարունակէր անոր համար աղօթել. ամէն օր կ'աղօթէր որ Աստուած օրհնէ ու պաշտպանէ այս «թափառական տղան» ամէն տեղ. ուր կ'երթայ ան, ու յաճախ իր աղօթքները այսպէս կը վերջացընէր. «Եւ եթէ քու կամքդ է՝ շնորհ որ նորէն անանեմ զայն»։

Բայց օրերը կ'անցնէին, և մինչև իսկ երկու տարի անցաւ, և դեռ լուր մը չկրցաւ առնել իր որդեգիրէն։

Հեռաւոր քաղաքի մը մէջ, Տիկին Պետրոսեանի բնակած քաղաքէն բաւական հեռու ծովեզերեայ քաղաք մը, պատանի մը երեքալով իր սենեակը կ'երթար, ու այնչափ արեւցած էր որ երկու կողմի մարդոց իսկ ուշադրութիւն չէր կրնար ընել։ Վերջապէս սենեակը հասաւ, ուր ինքզինքը նետեց անկողինին վրայ. ու մինչև յաջորդ աւտու ուշ տտնի առանց ուշաբերելու պառկած մնաց։ Կէսօրուան մօտ ստիպալի գլխացաւով մը արթնցաւ. սաստիկ թուլութիւն մը կը զգար և որոշեց վարը մօտը գտնուող գինետունը երթալ, ու «քանի մը հատ ալ կոնծել որ մոռնայ իր ցաւերը»։

Ելաւ զգեստի սնտուկին քով գնաց, ու մաքուր օձիք մը փնտռել սկսաւ։ Հակառակ փնտառութիւն՝ չկրցաւ գտնել, բայց ինք վստահաբար գիտէր թէ այդ տեղերը հատ մը ըլլալու էր։ Ու ճիշդ տղայաբար սկսաւ սնտուկին պարունակութիւնը քաշքռելով դուրս նետել ու սենեակին մէջ տեղը յատակին վրայ դիզել։

Յանկարծ կեցաւ : Շիտակ կայնեցաւ ու քանի մը վայրկեան անշարժ մնաց , ու յետոյ դէպ ի պատուհանը գնաց : Ձեռքը կար նամակներու ծրար մը , զոր երկար ժամանակէ մը ի վեր անտուկին տակը ձգած ու մոռցած էր : Ծրարին կապը քակեց ու ձեռքին մէջ պահարանները դարձնել սկսաւ : Յետոյ մօտը աթոռ մը չափանկով՝ դեղինը նստաւ և կամայ մը բացաւ առաջին նամակը ու զայն ամբողջութեամբ կարդաց : Սիրոյ ու համակրութեան բարի լուր մըն էր կարծես , և անկեղծ հետաքրքրութիւն մը կը ցուցնէր իր վիճակին և գործին վրայ :

Ձեռքի միւս նամակներն ալ կարդաց ամբողջովին , վերջին էջը նորէն ու նորէն քանի մը անգամներ կարդաց . — «Ու , սիրելիս , մի մոռնար թէ շատ երջանիկ պիտի ըլլամ յաճախ լսելով քու մօտին , և թէ յառաջիկայ տարիներու ընթացքին ուր որ ալ ըլլամ՝ ես պիտի շարունակեմ աղօթել քեզի համար : Մայրական կարօտագին սիրով , Սերունի Պետրոսեան :»

Յակոբ սաքի ելաւ : Աչքերը տաք արցունքներով լեցուած էին : Դիմացի հայելին մէջ ինքզինքը տեսաւ՝ երեսները կարմրած , աչքերը արիւնագոյն , մազերը անյարգար : Տխուր վհատութեան զգացում մը անցաւ վրայէն : Իր մայրաղիրը զինքը հիմա այս վիճակին մէջ տեսնել պիտի ուզէ՞ր , ա՛հ , և թէ խեղճար : Դեռ իրեն համար կը շարունակէր արդեօք աղօթել : Դեռ կը խորհէր իրեն համար : Այս և ուրիշ շատ մը հարցումներ վայրկենապէս կ'անցնէին Յակոբի միտքին առջեւէն :

Յանկարծ սենեակին միւս անկիւնը պնաց , զգեստները նորէն անտուկին մէջ թխմեց , և ուժով մը գոցեց զայն ու կղպեց :

— Ա՛լ մնաս բարով հին կեանքիս , մնաս բարով , ըսաւ ան :

Ձայնը դողալ սկսաւ ու յորդ արցունքներ թափեցան այտերն ի վար :

— Ա՛լ հերիք է , պէտք է ձգեմ այս կեանքը :

Սանդուղէն վար իջաւ , վարձակալուն հիտիկները փնտռեց ու ըսաւ .

— Այս իրիկուն երկիր պիտի մեկնիմ , ահաւասիկ ձեզի ունեցած պարտքս , քիչ մը ետքը կտաքով մը պիտի դամ անտուկս տանելու համար :

Ճիշդ երկու շաբաթ ետքն էր որ Յակոբ Տիգրանեան իրենց հին տունին պարտեղին մէջ կը կայնէր , և անոր մայրաղիրը երկայնաճառակ պատանին քովը կը կենար :

— Քու նամակդ էր որ զիս հոս բերաւ , մայր , կ'ըսէր ան : Անցուցած կեանքիս սոսկայնութիւնը յանկարծ պարզուեցաւ աչքերուս առջեւ , երբ կարդացի այդ նամակներդ , և գիտէի որ եթէ երբեք միջոց մը կար այդ կեանքէն ազատելու , զայդ անմիջապէս գործադրելու էի , եթէ ոչ վերջը չա՛մ ուշ պիտի ըլլար : Ատոր համար անմիջապէս քեզի վերադարձայ :

— Սիրելի գաւաթ , այդ բոլոր ժամանակի ընթացքին ես չէի դադարած քեզի համար աղօթել , բոլոր մայրաղիրը արցունքոտ աչքերով :

— Շարունակէ՛ , մայր , պատասխանեց պատանին յուզուած սիրով մը , այո՛ , շարունակէ , իմ դանդաւած սեզերս զըստուղի մը համար շատ կարեւոր է այդ : Ատուածոյ օգնութեամբ պիտի ապրիմ աւելի ազնիւ ու մաքուր կեանք մը , որ պատասխանը ըլլայ քու այդ աղօթքներուդ : Այս , կ'ուխտեմ , Աստուծոյ օգնութեան յատուկով : ԳՐԻԳՈՐԻՍ

(Անգղ. Եկեղեցւորական)

ՀԱՅ ՅԵՂԷ , Ազգային ասեմախօսութիւններ . — Գրեց Տիգր. Մ. Սմբատ Գարիբեան , Նիւ-Եորք , 1911 : Ամէն անոնք որ Հայոց ապրողայ փայլուն կեանքին ջերմ իղձովը կը սաշարին , անոնք որ կը փնտռեն անկեղծօրէն ճշմարիտ յառաջդիմութեան ճամբան , թո՛ղ կարդան այս հատորը , ամփոփում մը հեղինակին զանազան սուրբներով արտասանած ցնցող բանախօսութեանց , տեսակ մը շարունակութիւն հայկական ճգնաժամին , ուր արտասանող խօսքերով կը ցուցուին ազգի մը յառաջդիմութեան պայմանները , ճշմարտութեան և արդարութեան ճամբան : Գին թղթակալով 50 սէնդ , թաթակալով 75 սէնդ :

Ա Չ Գ Ա Յ Ի Ն Կ Ե Ա Ն Ք

ՎԵՂ. Տ. Տ. ԳԵՈՐԳ Ե. ՍՈՒՐԵՆԵԱՆՑ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Կ. Պապոյ Հայոց Պատրիարքական Աթոռէն ետքը, Ամենայն Հայոց Կաթողիկոսական Աթոռն ալ, որ թափուր կը մնար տարիէ մը ի վեր, ունեցաւ իր արժանաւոր Գահակալը՝ ՎԵՂ. Տ. Տ. ԳԵՈՐԳ Ե. Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍՈՒՐԵՆԵԱՆՑ, որ իր երջանկայիշատակ նստորդին մահէն ի վեր, իրր տեղապահ կը վարէր հայրապետական գործերը՝ աւանդապահ խղճատ թեմաբ մը:

Ս. Էջմիածնէն հասած հետազոտներէն կը հասկցուի թէ ամիսներէ ի վեր ընտրեւորներու շուրջը մղուած լրագրական պայքարներն և անհամաձայնութիւնները ծանրապէս գոյութիւն ունեցած են պատգամաւորներուն մէջ ալ, և ընտրութիւնը որ տեղի պիտի ունենար ճիշդ Դեկտ. 11ի Կիրակի օրը, կատարուած է Դեկտ. 13 Գ. օրը:

Էջմիածին գահուող պատգամաւորներու թիւը եղած է 117, որոնցմէ 26ր՝ Օրմանեանականներ ընաւ չին մասնակցած քուէարկութեան և մեկնած են վանքէն, քողբելով Փոխարքային թէ եկեղեցիներ կը լարուին:

Բշ. օրը, քառանուն ցանկի պատառաստութեան մասնակցած են 91 պատուիրակներ. արդիւնքը եղած է.

Բուէ

Տ. Գեորգ Ս. Արքեպ. Սուրհենանց	86
Տ. Եղիշէ Ս. » Դուրեան	84
Տ. Մեսրոպ Եպ. Մագիստրոս	78
Տ. Ստեփանոս Արքեպ. Յովակիմեան	63

Վերջնական՝ երկանուն ցանկի պատառաստութիւնը տեղի ունեցած է Գ. օրը Իջման Ս. Տաճարին մէջ, խորին և պատկառազգու լուսիւն մէջ, մասնակցութեամբ 88 պատուիրակներու: Արդիւնքը եղած է.

Բուէ

Տ. Գեորգ Ս. Արքեպ. Սուրհենանց 58

Տ. Եղիշէ Ս. Արքեպ. Դուրեան 57

Հետեւապէս Ամենայն Հայոց Հայրապետ ընտրուած է Տ. Գեորգ Արքեպ. Սուրհենանց, և Բանասիրա՝ (ըստ Պալամէնիայի) Տ. Եղիշէ Ս. Արքեպ. Դուրեան:

Ընտրութեան այս արդիւնքը խանդավառ ծափահարութեամբ ընդունուած է, զանգակներն սկսած են հնչել՝ աւետարկով Կաթողիկոսական ընտրութիւնը, մինչ խաւըն բաղմունքին հաւաքուած էր Իջման Տաճարին շուրջ:

Կենսագրական նօթեր. — Տ. Տ. Գեորգ Ե. Կաթողիկոս Ամենայն Հայոց ծնած է Տփլիս 1847ին, աղնուական ընտանիքէ: Նախնական և երկրորդական խնամակարթութիւն մը առնելէ, և ծանօթանալէ ետքը հայերէն, ռուսերէն, ֆրանս. և գերման լեզուներուն, մերժած է պետական ծառայութեան մէջ մտնելու կամ համալսարան զրկուելու ամէն առաջարկ, և ի մանկութենէ անտի ունեցած հոգեւոր կոչման հետեւելով՝ զացած է Էջմիածին, Տ. Գեորգ Գ. Կաթողիկոսի պաշտօնավարութեան առաջին օրերուն, և կարգուած է Ս. Էջմիածնի Ժառանգ. վարժարանին ուսուցիչ: Հետզհետէ կ'ըլլայ սարկաւազ (1868), աբեղայ և վարդապետ (1871): 1870ին անդամ կ'ըլլայ Էջմիածնի տպարանական ժողովին: 1872ին կը կարգուի Ժառանգաւորաց վարժարանին վերապետ, և բարեկարգիչ գործունէութիւն մը կ'ունենայ: Գեորգեան ճեմարանը բացուելուն (1874) կը նշանակուի ճեմարանին ընդհ. պատմ. և աշխ. ուսուցիչ: Տարի մը վերջը կ'անուանուի Ղարաբաղի թեմին փոխանօրդ և վարժարանի տեսուչ, և Շուշի մէջ առաջին անգամ ըլլալով կը բանայ աղջկանց վարժարան: 1877ի սկիզբը կը

նշանակուի վերին Ագուլիսի Ս. Թովմայ Առաքեալ վանքին վանահայր, և տեսուչ տեղւոյն երկսեռ վարժարանաց: Բաֆֆի որ այդ չրջանին ուսուցիչ եղած է Սուրէնեանց Վ. Ի հետ, գովեստով կը խօսի երիտասարդ Վ. Ին վրայ, «որ վեղարի տակ պահպանել է ուսանողի և ուսուցիչականի մաքուր բարոյականը. շատ եռանդով և անխնայ մարդ է»: Կարճ միջոցէ մը ետք, յորում յաջողած է ինքզինքը սիրելի ընծայել, 1878 Հոկտ. 12ին փոխանորդ կը կարգուի Ս. Պետրոսեանցորդի վիճակին ուր կը յաջողի պառակտեալ ժողովուրդը համիրաշխել, և տեղւոյն Ս. Փրկիչ եկեղեցւոյ չրջափակին մէջ շինել հոյակապ վարժարան մը, նաև հիմնարկել երկու եկեղեցիներ, ու բանալ նախակրթարաններ: 1881ին Գէորգ Վ. կարգուեցաւ փոխ-թեմակալ Երեւանի վիճակին, Տփղիսի առաջնորդութենէն ետքը ամէնէն կարեւոր պաշտօնը, և այդ միջոցին ձեռնադրուեցաւ եպիսկոպոս. շինարար գործունէութիւն ցոյց տուաւ Երեւանի մէջ, եկեղեցիներու և նորոգութեամբ և ի նորոյ կառուցմամբ, դպրոցներու բարեկարգութեամբ, և անոնց հաստատուն հասոյթներ ապահովելով, իր թեմին ստորակարգեալ վիճակներ այցելելով և իրադարձարար ու շինարար գործեր ի գլուխ հանելով: Ժողովրդային համակրութիւնն այնքան մեծ եղած է իրեն նկատմամբ, որ յուզումի և ջերմ խանդավառութեան ցոյցերու մէջ թողուց Երեւանը, 1885ին, երթալու համար Ասորաքան, իբրև թեմական կառավարիչ, ուր նոյն ջերմ կրթասիրութիւնն ի հանդէս լերած է, փակման վիճակին հասած ծխական դպրոցը վերաբանալով, աղջկանց դպրոցն ընդարձակելով, ռուս գիմնազիւններու մէջ հայ կրօնի և լիզուի ուսուցումը — որ կամաւոր էր — պարտաւորիչ դարձնելով, այս դասաւանդութիւնն ապահովելու համար 15000 ռուբլի հանգանակելով և պանքան դնելով ևն.: Եկեղ. երգեցողութեանց կանոնաւորման համար Պաքուէն կը հրահրէ Կարա-Մուրզան և քառաձայնի խումբեր կազմել կուտայ, թեմական-եկեղեցական գործերը կը կանոնաւորէ և կը

կազմակերպէ, չքաւոր եկեղեցականաց համար օգնութեան անտուկ մը կը հաստատէ, և 1300 ռբլ. կը հաւաքէ՝ ի նպաստ Ս. Էջմիածնի նորոգութեան: 1887 և 1888ին Ձէյթունի հրկիզեալներուն համար կը հանգանակէ 4000 ռբլ.:

1888 Սեպտ. 20ին Վաստիկովկասի մէջ իրր Ասորաքանի թեմակալ կը ներկայանայ Աղեքսանդր Գ. Ջարին և Ջարուհին, և տեղանակից կ'ըլլայ անոնց: Ասորաքանի պաշտօնավարութիւնը կը տեսէ մինչև 1894, նոյն կրթաւէր ու բարեկարգիչ ոգով, թէ՛ թեմի կեդրոնին և թէ՛ յարակից վիճակներուն օգտակար հանդիսանալով: Այդ թուականին կը կոչուի Տփղիսի առաջնորդութեան, իրիմեան Կաթողիկոսի հրամանով, և թէև կրթական գործին մէջ լուրջ մասնակցութիւն չունենար, և կուսակցական բուռն պայքարներ իր շուրջ ալ կը մղուին, բայց կը յաջողի շինարար գործունէութիւն ցոյցնել: Վանուց աւագ եկեղեցին կը նորոգէ՝ 25000 ռուբլի հանաքելով, և միայն Մանթաշեանէն 24000 ռուբլի նուիրատուութիւն մը ստանալով: Կատարած է ուրիշ եկեղ. շինութիւններ ալ, և—Տփղիս քաղաքը իր կրթական գործունէութեան պէտք չունենալով — ուշադրութիւն ընծայած է մասնաւորապէս գիւղական վարժարաններու: Երբ Ռուս կառավարութիւնը դպրոցները փակեց, Գէորգ եպ. աշխատեցաւ զուտ եկեղ. հասոյթներով դրպրոցներ բանալ, քանի որ ատոնց համար արտօնութիւն կար. մաքառեցաւ նաև իրր դպրոցական կալուածներ՝ եկեղեցիներու կալուածներու դրաման դէմ, և նոյն իսկ տեղ տեղ դատ բանալով յաջողեցաւ փրկել անոնց մեծ մասը. աշխատեցաւ կրօնասոյցներ կարգել տալու ռուս վարժարանաց, գէթ ազգային ոգին պահպանելու համար հոն յաճախող հայ տղոց մէջ: 1894ին Թ. քահայ փախստականներուն օգնութիւն կազմակերպեց Կաթողիկոսին թելադրութեամբ, և յաջողեցաւ 9000 ռուբլի հաւաքել: 1896ին Տրապիզոնի ջարդէն նաւակներով խոյս տուող Հայերը իր ջանքերով ընդունուեցան և խնամքի ստարկայ եղան: Ատոնց համար հանգանակեց 4000

րուրի: Ախալքալաքի երկրաչարժի արկածեալներուն յաջողեցաւ կարեւոր նպատակը հասցնել, և 1900ին Սաւուռնի կոտորածէն արկածեալներուն համար ալ 3000 րուրի հանգանակելով Կ. Պոլիս ղրկել: 1894ին Բեդերսպուրկ ղրկուելով ներկայ գտնուեցաւ Աղեքսանդր Գ. Զարին թաղման և Նիքոլա Բ. կայսեր ամուսնութեան հանդէսներուն, և ներկայանալով նոր կայսեր, յանուն Հայոց Կաթողիկոսին շնորհաւորեց անոր գահակալութիւնը: Որիմեան Կաթողիկոս իրեն պաշտօն յանձնած էր Զարին գթութիւնը հայցել թուրքիայ Հայոց անտանիկի վիճակին վրայ: Այս խնդիրը Նոյ. 24ին գրաւորապէս ներկայացուց Արտաքին գործոց նախարարին, և դարձաւ Տփղիս:

1895 Յունվարին Որիմեան Կաթողիկոս Արքեպիսկոպոսութեան աստիճանին բարձրացուց զինքը: Եկեղց. գործերու մէջ չինարար եղաւ: Եկմալեանը հրաւիրեց և անոր քառաձայն պատարագը տպագրելու համար բարերար մը գտաւ. քահանայից վիճակը բարելաւելու ջանքեր ըրաւ, թեմերը չրջագայեցաւ և կարելին ի գործ դրաւ, Եկեղեցւոյ պայծառութեան և հայ դպրոցներու պահպանութեան և յառաջգիւղութեան համար: Ազգային և եկեղեցական շահերու թունդ պաշտպան եկեղեցականի իր նկարագրով՝ անհաճօյ եղաւ Կալիցնի. ուստի հոգելոյս Որիմեան Կաթողիկոս, 1901ին, առանց հրաժարեցնելու, Ս. Էջմիածին կանչեց զայն: Տարի մը անգործ մնալէ ետքը, 1902ի վերջերը դարձաւ Տփղիս, իր պաշտօնը շարունակելու, բայց երբ եկեղց. կալուածները գրաւուեցան, Տ. Կէորդ Արքեպ., ինչպէս բոլոր ուսումնայ կղերը, չհամակերպեցաւ: Ռուս կառավարութիւնը հրաժարեցուց զինքը՝ իրրեւ ըմբոստ. 1904 Յունվար 8ին: Հոգելոյս Որիմեանը պատուով ընդունեց զինքը, և անձամբ այցելելով՝ յայտնեց իր ցաւակցութիւնը: Երբ Վարանցով Տաշքով Կովկասի փոխարքայ եղաւ, տրամադրութիւնները փոխաւած էին և կալուածները վերադարձուած. որով 1906 Փետրուարին Տ. Մկրտիչ Կաթողիկոս Սինօլի անդա-

մակցութեան կոչեց զինքը, կառավարութեան հաւանութեամբ: Այդ պաշտօնին մէջ վարիչ դեր մը կատարեց, մանաւանդ Որիմեան Կաթողիկոսի վերջին օրերուն, և անոր վախճանումէն ետքը ստանձնեց տեղակալութիւնը. զոր վարեց մինչև 1909 տեպտ. 13, Տ. Մատթէոս Բ. Կաթողիկոսի օծումը: Այդ միջոցին ցոյց տուաւ բարեսիրտ և աւանդապահ ոգի, և իր միջնորդութեամբ էր որ հանգ. Մանթաշեան յանձն առաւ Մայր Տաճարին նորոգութեան յատկացնել 40000 րուրի: Տ. Մատթէոս Բ. ի Կաթողիկոսութեան կարճատեւ օրերուն գլխաւոր խորհրդականն եղաւ անոր, և հիացող մը՝ անոր ուղղութեան: Տ. Մատթէոս Բ. ի վախճանէն ետքը դարձեալ տեղակալ հռչակուեցաւ, և այս միաժամայ չրջանին կրցաւ 40000 րուրի վճարել վանքի պարտքերէն:

* * Լեցուն կեանք մը, ուր ազգիս նորնափր Հայրապետը նշանակելի և օգտակար գործունէութիւն մը ցոյց տուած է ուր որ պաշտօնավարած է, առիթ ունենալով ժողովրդեան ամէն խաւերը ճանչնալու և ազգին ստիպողական պէտքերը ուսումնասիրելու: Իր ուղղութիւնն եղած է ջերմ աւանդապահութիւն մը՝ Հայ Եկեղեցւոյ կարգաց և կանոնաց, միեւնոյն ասեն ցուցնելով բարեկարգիչ ոգի մը, իղձ մը եկեղեցականութեան դիրքի բարձրացումին նիւթապէս ու բարոյապէս, և խորունկ կրթնասիրութիւն մը՝ բառին ամենալայն իմաստով: Իրր ուսումնայ եկեղեցական, յուսալից ենք որ պիտի կրնայ բաղձալի լուծում մը ձեռք բերել եկեղեցական կըրթական և քաղաքային գործերուն մէջ, որոնց թուումը կ'ընէր մեր ազնիւ աշխատակից Տիար Ա. Ալպոյաճեան, իր յոգեւածաշարքով որ երեւցաւ Տանաւի մէջ:

Մեր խոնարհ շնորհաւորութիւնները ժատուցանելով, ջերմագին կը մաղթենք երկնային ուժ և զօրութիւն՝ ներկայ ժամանակներուն սկեպտիկ հոսանքին մէջ, յաւէտ անասան և իրեն արժանի բարձրութեան մէջ պահելու Ս. Լուսաւորչի պատուական ու պատմական Աթոռը, որուն ղովանդիւն տակ կը պահպանուի տա-

նապիտակ Հայ ազգին միութիւնն ու գոյութիւնը ու պատգին կը գոչենք.

ՅԱԻԷՏ ԿԵՅՅԷ

ՎԵՂ. Տ. Տ. ԳԵՈՐԳ Ե.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱԹՎ. ՀԱՅՈՅ

Ս. ՊԱՏՐԻԱՐԷ ՇՈՐ ՌԻԽՏԸ,

ԻՐ ՏՊԱՆՈՐԻՋ ԽՕՍՔԵՐԸ

Ժողովրդային խումբն լազուլութեան մը ներկայութեանը, Ս. Պատրիարք Հայրը անցեալ Ուրբաթ օրը Մայր Եկեղեցւոյ մէջ, — ուր առաջնորդուած էր հանգիստը թափօրով, — կատարեց իր Ուխտը: Ազգային ժողովոյ Ատենապետ Մանուկ Էֆ. Ազարեան՝ յատենի և յանուն Ազգ. Ժողովոյ՝ շնորհաւորեց Ն. Սրբազնութիւնը՝ պարագային յարմար խօսքերով, որմէ յետոյ Ազգ. Սահմանադրութիւնը յանձնելով իրեն՝ հրաւիրեց կատարել իր սահմանադրական ուխտը: Խորին յուսկեան մէջ, Ս. Պատրիարքը՝ Խորանին առջեւ ծնրողի՝ արտասանեց իր Ուխտը.

«Առաջի Աստուծոյ եւ ի ներկայութեան Ազգ. Ժողովի, հրապարակաւ կ'ուխտեմ հաւատարիմ մնալ սահմանադրական Օսմ. Պետութեան, եւ ճշմարտապէս հսկել Ազգ. Սահմանադրութեան անքերի գործադրութեանը»:

Հոգեկան յուզիչ մտայն տպաւորութեան մը տակ Ս. Պատրիարքը դարձաւ ժողովուրդին: Տեղապահ Տ. Վահրամ Արքեպ. Մանուկեան Ն. Սրբազնութեան յանձնեց Պատրիարքական աւան՝ պարագային յարմար գնահատական խօսքերով խուելով անոր արժանիքը, և յայտարարելով թէ «վրդովումներու մէջ էր ազգին ներքին վիճակը երբ պաշտօնի կոչուեցայ, բարեբախտ կը համարեմ ինքզինքս՝ յանձնելով ձեզ ազգին վիճակը՝ խաղաղ կերպով»:

Ս. Պատրիարքը պատասխանեց հետեւեալ ուշագրաւ խօսքերով. —

«Շնորհակալ եմ, Սրբազան եղբայր, և ձեր թուած յատկութիւնները իմ կարողութեան տանձնէն վեր են. բայց կ'ապաւինիմ Աստուծոյ, որուն՝ մարդկային միտքը չէ կրցած թափանցել: Ան էր որ զօրացուց,

արիացուց Առաքեալները՝ որ գործեն իրենց անձանօթ երկիրներ: Կ'ապաւինիմ այն Աստուծոյն, որպէս Ոչտունեաց բուրտասանին անուշահոտ ծաղիկը՝ առ Աստուած աղերսով Գրիգոր Նարեկացի, ըսելով. «Տէ՛ր, աչք քո յիս և ես ի գոփոս»: Շնորհակալ եմ Պատ. Ժողովին վստահութեան ու համակրութեան համար, որ զիս կոչեց այս պաշտօնին: Կը հաւատամ որ այս ընտրութիւնը պղտորանական սէրը չէր, այլ համալուծի ու գիտակցութեան արգիւնք: Պատ. Անդամներ Ազգ. Երեսփ. Ժողովի. դուք որ առանց իմ գիտակցութեան կանչեցիք զիս այս պատրիարքական ծանր պաշտօնին, իմ շնորհակալութիւնները կը յայտնեմ ձեզ առ այս, և անշուշտ եմ որ դուք ձեր միաձայն օժանդակութիւնը չպիտի զանաթ ինծի և զօրավիգ լինիք ինձ: Եթէ դուք ձեր օժանդակութիւնովն ու համերաշխ աշխատութիւնովը զօրավիգ չլինիք ինձ, այն առան, ես ապէտոս, տկար, հիւանդ ու անկարողս, կ'ապիկարանամ և անկարող կ'ըլլամ պայքարելու և աշխատելու: Ես լիայոյս եմ որ այս ժողովս պիտի օգնէ ու համանուագ և համերաշխ աշխատութեամբ պիտի ընկերակցի ինծի: Տառապեալ ու խորապակեալ Ազգին ցաւերը անհուն են, վերքերը խոր, և ամեն օր կարկուտի նման կը թափին խնդիրները: Կը խտրանամ զառնալ առիւծ ամենի՝ օտարին առջեւ ազգային շահերը արշտպանելու համար, և Ազգիս առջեւ ազու ազաւնի: Կ'ազաչեմ որ մեր վիճաբանութիւնները չմզկն մեզի՝ մինչեւ եսականութեան. վիճինք, կարծիքներ վտանակենք, յարգենք իրարու գաղափար և սկզբունքը. բայց չյուզենք եզրայրատեաց պայքարներ: Այս ընթացքով կը ստեղծուի որ կորստեան վիճը կը գահաւորվինք: Անցեալը մէկ կողմ թողլով. զօրակից ըլլանք իրարու, և օտարն ու տեսնէ թէ մէկ կ'ենք, մէկ ուրա»:

«Շատ անգամ Հայ - հռոմէականաց, Յունաց և օտարներու հետ չփոխն մէջ կը գտնուիմ. անոնք կ'այսպէսն մեզի՝ մեր այն ցաւայի ունակութեանը համար՝ թէ միշտ անհամաձայնութիւն, պատակաստ

կը տիրէ մեր մէջ: Երբ գործարանէ մը ներս կը մտնէք, նախ կը տեսնէք բանուորներն որ եղանդով ու ժիր կ'աշխատին, յետոյ մեքենաները, վերջէն անոնց մանրամասնութիւններն, և սոցա չոգի կաթնամանն որ գործունէութեան մէջ կը դնէ բոլոր մեքենական կազմածները: Այս չոգին, մեր բոլոր վէճերուն այս առանցքը, նպատակը պէտք է ըլլայ միայն ազգին օգուտը: Աստուած չնորձէ ձեզի հոգի իմաստութեան, հոգի պաշտամութեան և զօրացնէ ձեզի, ինչպէս երբեմն պարզ ու ազնւոյ ձկնորսներէն ազատութեան մենամարտիկներ յարցոյ: Ես փիլիսոփայական հմտութիւն չունիմ, բնագիտական, բնաբուժական ուսում չունիմ, ունիմ միայն բարեարտութիւն, անկեղծութիւն, և մէկուն միւսին քննաքնն չեմ հպատակիր:» Արշարունի Արքայան կրկին կոչ ուղղելով Ազգին միաբանութեան և համերաշխութեան, վերջացուց իր սպասարիչ խօսքերը:

«Ուրախ լը» շարականով Ս. Պատրիարքը առաջնորդուեցաւ նախագահական աթոռ, ուր Պաճպանիչ ըստ և Ատենապետը փակեց Ատենը: Գուրեան Տ. եղիշ Ս. Արքեպ. որ ներկայ էր, սիրազեղ կերպով ողջագոյնուեցաւ Ս. Պատրիարք Հօր հետ, որ ժողովրդային խանդավառ ծափերու մէջ առաջնորդուեցաւ Պատրիարքարան, և ընդունեց ծանօթ ազգայիններու և Պատրիարքարանի պաշտօնէութեան շնորհաւորութիւնները:

Ս. ՊԱՏՐԻԱՐԿՆ Ի ԿԱԾՍ. ՊԱՆԱՏ

Ս. Պատրիարքը Գշ, օր վեհ. Կայսեր ներկայութեանը ընդունուեցաւ: Արարողագետ Ծուռա պէյ պալատական երեք կողքերով Պատրիարքարան եկաւ, և Ն. Արքայութիւնը՝ ուղեկցութեամբ Վարչութեան անդամաց և այլ եկեղեց. և աշխարհական անձնաւորութեանց, հանդիսաւոր գնացքով առաջնորդուեցաւ Տօբա Պաղչէի Պալատը, ուր վեհ. Կայսեր ներկայութեանը ընդունուելով արատաւեց հետեւեալ բանախօսութիւնը:

«Վեհափառ Տէր,

«Ազգ. Լոյս. Ժողովին կողմէ և օրէնքի համաձայն Կ. Պոլսոյ և անոր ենթակայ

գաւառներու Հայոց Պատրիարքութեան պաշտօնին կոչուեցայ, և այս պաշտօնը վաւերացուեցաւ Կայս. Իրաւէով: Ասկէ առաջ չորս անգամ Ձեր Վեհափառութեան ներկայանալու պատիւին արժանացած ըլլալով, այս անգամ ալ իբր Պատրիարք Կայս. ունկնդրութեան ընդունուելուս համար Ձեր Վեհափառութեան արտօնութեան առիթով ինքզինքս բախտաւոր կը համարիմ, և յաւիտեան երախտապարտ ու շնորհապարտ եմ Կայս. այս շնորհին համար:

«Վեհափառ Տէր,

«Անհուն գոհունակութեամբ կը զիտուի որ Ձեր Կայսերական բաղձանքին համաձայն Սահմանադրութիւնն ամբողջապէս կը գործադրուի և արդիւնքներ առաջ կը բերէ: Յուսով եմ որ իմ Պատրիարքութեանս միջոցին Օսմ. սահմանադրական կառավարութեան զիւրութիւններն ու աշակցութիւնը պիտի վայելեմ:

«Բարձրեայն Աստուած Ձեր Վեհափառութիւնը տեւական կերպով և կատարեալ առողջութեամբ Օսմ. Կայս. Գահին վրայ անառաւոր պահէ: Ամէն:»

Կայսրը պատասխանեց հետեւեալ խօսքերով.

«Ձեր պաշտօնը կը շնորհաւորեմ եւ յաջողութիւն կը մաղթեմ: Երկրի բարօրութիւնը կախում ունի ամեն անհաւաճայնութիւն մէկ կողմ դնելով հաւերաշխութեան եւ բարոյ յարաբերութեան վերաբերելով իրարու նկատմամբ: Եթէ ամենիս համաձայնութեան աշխատեմ, ամենուն սեփական եղող հայրենիքը կը պահպանեմ եւ կը շեղեմ: Օսմանեան Գահուն հանդէպ Հայոց ունեցած հաւասարութեան վիճակն է պատկերասրահը: Կը մաղթեմ որ Աստուած արդիւնաւորե՛ ձեր ցանկերն իբրեւ բարոյական պէս սեր այս ժողովրդեան:»

Ի պատասխանի Ս. Պատրիարքն աւելցուց թէ Հայ Ազգն իր հաւատարմութեան մէջ անուրաջ մնացած է ու կը մնայ, և միշտ կ'աղօթէ ինչպէս երկրին զարգացման, նոյնպէս նաեւ Օսմանեան Գահուն և Ն. Կ. Վեհափառութեան համար:

Կայսրը ժպտուն գէւքով ընդունելով

այս յայտարարութիւնը, Ս. Պատրիարքն իր հետեւորդներով մեկնեցաւ Գահոյից Դահլիճէն և կառքերը բազմելով մեկնեցաւ Կայսերական Պալատէն:

Նոյն հանդիսաւոր թափօրով, Ս. Պատրիարքը Բ. Դաւա երթալով այցելեց Վարչապետին, ու պատերազմական և դատական նախարարներուն, նաև ներքին գործոց նախարարին, որ հաւաստիքներ տուաւ թէ գաւառներուն ապահովութեան մասին կարելին ի գործ պիտի դրուի: Իրիկուան մօտ Ս. Պատրիարքը դարձաւ Մայր Եկեղեցի նոյն հանդիսաւոր գնացքով, և բնմին վրայ ժողովրդեան դառնալով հաղորդեց Կայսեր ներկայացած ըլլալը և Ն. Վեհափառութեան բարեւները, և սիրոյ և համերաշխութեան հայրական յորդորները:

* Ս. Պատրիարք Հայրը Եջ օր այցելեց միւս նախարարներուն:

ԱՏԱՆԱՅԻ մէջ բարոյական և առողջական ահաւոր վտանգէն դուրս, զոր մասնանիշ կ'ընէինք նախորդ թուով, նոր վտանգներու լուրեր կը հասնին: Անցեալ չարթու լուր ելած ըլլալով թէ վերատին յարձակում մը կը պատրաստուի Հայոց դէմ, կուսակալ Մուամմէր պէյ տեղւոյն շէյխերը և իսլամ երեւելիները, նաև հոգեւոր պետերը իր շուրջը հաւաքելով, դարձեալ յորդորներ ըրած է եղբայրական սիրով վերաբերուելու իրարու նկատմամբ, աւելցնելով թէ ո և է չարիք անպատիժ չի կրնար մնալ, և կառավարութիւնը պէտք եղած խստութիւնը ի գործ պիտի դնէ: Գովելի է Մուամմէր պէյի աշայրջութիւնը. ո՛ր թէ բոլոր նահանգներու կուսակալները միեւնոյն ընթացքն ունենային:

Ա՛՛՛՛՛. ՊՈԼՈՑ առաջնորդ բնորոտած է Տ. Դանիէլ Ս. Արքեպ. Յակոբեան:

ՀԱՐՍՆԻՔ

Հաճոյքով կը ծանուցանենք թերթիս հմուտ աշխատակից և իր պատմա-բանասիրական երկասիրութիւններով քաջածանօթ Տիար Գէորգ-Մեսրոպի պատկազրութիւնը, որ տեղի կ'ունենայ Օր. Շն. Բէ ԳՈՋԱՆՃԵԱՆԻ հետ, վաղը, կիրակի, գիշեր, Ատաբաղար Ս. Հրեշտակապետ եկեղեցին: Մեր ջերմ շնորհաւորութիւնները:

ՆԵՎՍԱԼԻ ԷՐՄԷՆԵԱՆ

Ճեռիսէի Շարգիյի պատասխանատուանօրէն Յակոբ էֆ. Վարժապետեան մեր թրքախօս ազգայնոց համար պատրաստած է այս անունով տարեցոյց մը, որ տօնարական կարեւոր գիտելիքներէ զատ կը պարունակէ շահեկան գրութիւններ, վիճակագրական տեղեկութիւններ, զուարճալիքներ, ևն: Զերմապէս կը յանձնարարուի մեր թրքախօս ազգայնոց, Դիմել հեղինակին, Ճէրիաէի Շարգիյէ ապարանը, Պապը Ալի մեծ դրան դէմ: Գին 60 փր.:

ՍՏԱՆԱՅԻՔ

ԱՄԵՐԻԿԱՆԱՅ ՏԱՐԵՑՈՅՐԸ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Հոյակապ գործ մը շուրջ 400 ստուար էջերէ բաղկացած, ուր Տ. Մուշեղ եպիսկ. և Ամերիկահայ մատուցականութիւնը ձեռք ձեռքի տուած են, ծանօթացնելու համար Ամերիկահայը՝ իր անցեալի ու ներկայի բոլոր փուլերուն մէջ: Պատմական, գրական, բանաստեղծական գեղեցիկ էջեր: Գին 1 սոլար, Տպ. Պօսդօն, Կիլիկիա տպարան: Հասցէ՝ Cilicie Press, 795 Washington St., Roan 2, Boston, Mass:

ԿԱՐԵՒՈՐ

Մեր պատուարժան գործակալներէն կը խնդրենք տարեգրութէն առաջ մաքրել իրենց հաշիւը, ի վիճակի դնելու համար զմեզ գործադրելու այն օգտակար առաջադրութիւնները զորս կը պարգենք քիչ մը անդին: Նոյնը կը խնդրենք ուղղակի բաժանորդագրուող այն անձերէն, որ տակաւին իրենց բաժնեգինը չեն լրկած:

Արտօնատէր

ՀՄԱՅԵԱԿ ՔԶՆՅ. ԷՔՄԷՐՃԵԱՆ

Տնօրէն-Խմբագիր

ՋԱՐՄՈՍԻ ԴԶՆՅ. ԿԵԶԻՐԻՅԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ

„ՏԱՃԱՐ” Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ գաւառաց՝ քաղաքացի	40	դրու
Արսասահմանի համար	»	10 ֆրանկ
Ռուսիա	»	4 ռուբլի
Ամերիկա	»	2 օղար
Ձեռքէ կը ծախուի պրակը	40	փարա

Հինգ բաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԵՐԸ ԿԱՆԻՒԿ ԵՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄ ԴԻՐԱՄԱՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

ՕՍՄ. ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

سُكُوتِ نِجَارِيَّةٌ عُمَانِيَّةٌ

SOCIÉTÉ COMMERCIALE OTTOMANE

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 100,000 ՕՍՄ. ՈՍԿԻ

Կեդրոնացեղի՝ Կ. ՊՈԼԻՍ

Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՀԱՅ ԳՐԱՄԱՏՈՒՆ

ԳՐԱՍԵՆԵՍԿՆԵՐԸ ԱՌԺԱՄԵԱՅ ԿԵՐՊՈՎ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԵՆ

ՍԹԱՄՊՈՒԼ, ԳԱԹԸԳՃԸՕՂԼՈՒ ԽԱՆ

Հայկական սոյն զբաղական հաստատութիւնը կ'ընէ փոխառութիւններ՝ առեւտրական տոմսերու, մուրհակներու, փոխանակագրերու, բաժնեթուղթերու, պարտաթուղթերու, ապրանքներու եւ բեռնազիրներու վրայ:

Կուտայ չէքեր, վարկազիրներ, փոխանակագրեր եւ հեռագրական վճարումի հրամաններ՝ ինչպէս թուրքիայ, նոյնպէս աշխարհիս բոլոր մասերուն վրայ:

Կը դնէ եւ կը ծախէ ամեն տեսակ բաժնեթուղթեր եւ պարտաթուղթեր, թէ՛ մեր եւ թէ՛ բոլոր օտար հրապարակներուն վրայ, ինչպէս եւ օտար դրամներ:

Կը գտնէ եւ կը գնդչէ առեւտրական տոմսեր, մուրհակներ, փոխանակագրեր, բաժնեթուղթեր եւ կարօններ:

Կ'ընդունի զբաղական աւանդներ նպատաւոր պայմաններով:

Դրամատունա հաստատած է Առեւտր. տեղեկութիւններու համար լաւագոյն կերպով կազմակերպուած սպասարկութիւն մը:

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՄՆՏՈՒԿ

Խնայողութիւնը մեր համայնքին մեջ քաջաբերելու համար կ'ընդունի

խանութիւն (25) դրուշէն սխեմով գումարներ

Դրամատունա կը կատարէ նաեւ, թէ՛ իր հաշուոյն, թէ՛ մասնակցութեամբ եւ թէ՛ ուրիշներու հաշուոյն ամէն տեսակ արդիւնաբերութիւններու եւ ապրանքներու գնում, վաճառում, փոխանակութիւն, ներածում եւ արտածում:

Կ'ընդունի ներկայացուցչութիւն թէ՛ տեղական եւ թէ՛ օտար տուններ:

Կը կազմէ առեւտրական եւ ճարտարարուեստական ընկերութիւններ եւ կը մասնակցի անոնց: Կ'ընէ հանրագումար չինութեանց վերաբերեալ ամէն տեսակ ձեռնարկութիւններ:

ԳՐԹԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ
«ՏԱՃԱՐ» ԿՐԾՆԱԹԵՐԹԻ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-
նորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բհնյ. Կա-
բիկեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
զոս Վրդ. Գաֆթանեան
ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեգին Բհնյ. Պողար-
եան
ԱՏԱՐԱՋԱՐ. — Տ. Սերոբէ Բհնյ. Պուր-
մայեան
ԱՏԱՆԱ. — Տ. Կարապետ քչյ. Երե-
ւոնեան
ԱՅԻՐՈՆ ԳՐԱՆԶԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բհնյ. Տօնեկեան
ԲԱՅԵՐԴ. — Մ. Սանտեան էֆ.
ԲԱՂԷՇ. — Առաջնորդ Տ. Սուրէն Ծ. Վ.
Գալէմեան
ԳԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բարսէն Եպս.
Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար-
գիսեան
ԵՕՁՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Եպիսկ.
Իմաքսեան
ԵՐՁՆԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Եղիշէ
Բհնյ. Արամեան
ՁՄԻԻՌԻՒՆԱ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻ ՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ Բհնյ. Տ.
Գալուստեան
ԿԱՐԻՆ. — Առաջն. Փոխանորդ Տ. Ներսէս
Ա. Բհնյ. Վահանեան

ԿԻՐԱՍՈՆ. — Տ. Սրապիոն Բհնյ. Այլաեաճ
ՀԱԼԷՊ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մուրատեան
ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Բհնյ. Պիպիեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ.
Տատեան
ՈՒՇԱՔ. — Տ. Յարութիւն Բհնյ. Աստարազ-
եան
ՊՐՈՒՍԱ. — Առաջն. Տեղապահ Տ. Վար-
դան Ծ. Վ. Գասպարեան
ՊԱՆՏՐՄԱ-ՊԱԼԷՔԻՍԻՐ. — Տ. Կուսմի Բհ.
Ֆիրգաթեան
ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպիսկ. Կէօմրիւքճեան
ՌՈՒՍՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըրջ-
նիկեան
ՌՈՏՈՍԹՕ. — Առաջնորդ Տ. Գէորգ Ծ.
Վրդ. Ապանեան
ՍԵՐԱՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բհնյ. Օտապաշեան
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բհնյ. Թուփմանեան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դրոնիսիոս Բհնյ. Տրեզ-
եան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏՐԱՊԶՈՆ. — Առաջնորդ Տ. Սերոբէ Վ.
Սամուէլեան
ՓԱՐԻԶ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վահան-
պետ Բհնյ. Քիպարեան
ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պասկ Վրդ.
ՖրէճնՍ. — Յակոբ էֆ. Նչկեան

ԳԻՆ 1 ՂՐՈՒՇ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒԲԱՆ

Զախմախըշար, Յակոբեան Խան

Կ. ՊՈԼԻՍ